ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐԶԵՑՎԱԾ ԲՅՈՒՋԵ 2026

Սույն հրապարակումը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցաբար գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի կողմից իրականացվող «Բյուջետային վերլուծություն սոցիալական ոլորտում» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ն, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԼՂ	Լեռնային Ղարաբաղ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

05 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

06 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ

07 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿՇԻՌԸ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ

08 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՃԸ

09 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

11 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԾՐԱԳՐԵՐԻ

12 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

14 ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

17 ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱԿԱԶԴՄԱՆ և ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՎԵՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ԱՌԱՆՁԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

- 2026 թվականի պետական բյուջեն նախատեսվել է եկամուտների գծով 3,091.0 մլրդ դրամ, ծախսերի գծով 3,627.6 մլրդ դրամ և դեֆիցիտի գծով 536.8 մլրդ դրամ կամ համապատասխանաբար ՀՆԱ-ի 25.9, 30.4 և 4.5 տոկոսը:
- Սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերը պետական բյուջեում ներկայացված են Սոցիալական պաշտպանության ծրագրերով և դրանց համապատասխան միջոցառումներով, որոնք համակարգվում են ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) կողմից:
- Ըստ «ՀՀ կառավարության 2026 թվականի բյուջետային ուղերձ-բացատագրի» Սոցիալական պաշտպանությունը պատմականորեն պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկն է, որի հիմնական նպատակներն են երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումն ու բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը:
- Սոցիալական պաշտպանության ոլորտին 2026 թվականին կուղղվի 993.0 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 9.6 տոկոսով կամ 87.2 մլրդ դրամով:
- ՀՆԱ-ի նկատմամբ սոցիալական ծրագրերին ուղղված ծախսերի կշիռը 2026 թվականին կկազմի 8.3 տոկոս՝ 2021-2025 թվականների 8 տոկոս միջին մակարդակի պայմաններում, իսկ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ՝ 27.4 տոկոս՝ նախորդ 5 տարիների 28.2 տոկոս միջին մակարդակի պայմաններում:
- Սոցիալական պաշտպանության ոլորտի ֆինանսավորման աճը համեմատաբար կայուն է: 2021-2026թթ. սոցիալական պաշտպանության ծրագրերի ֆինանսավորման միջին տարեկան աճը կազմում է 10.6 տոկոս և զիջում է նույն ժամանակահատվածում պետական բյուջեի ընդամենը ծախսերի միջին տարեկան աճը 0.9 տոկոսային կետով:
- Վերլուծության հիմքում ընկած են «Զբաղվածության», «Բնակարանային ապահովում» և «Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն» ծրագրերով 2026 թվականին նախատեսված բյուջետային հատկացումները և միջոցառումները: Վերջիններս առնչվում են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց սոցիալական ինտեգրմանը:

Սոցիալական պաշտպանության բյուջեն և դրա տարեկան աճը 2021-2026թթ., տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Սոցիալական պաշտպանության բյուջեի կշիռը ՀՆԱ-ում 2021-2026թթ., տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- 2026 թվականին պետական բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերի ֆինանսավորմանը կուղղվի 993.0 մլրդ դրամ: 2026 թվականին նախորդ տարվա փաստացի մակարդակի համեմատ պետական ֆինանսավորումը կաճի ավելի քան 87.2 մլրդ դրամով կամ 9.6 տոկոսով:
- Սոցիալական պաշտպանության ֆինանսավորումն աճող է: 2021-2026 թվականների համար ֆինանսավորման միջին տարեկան աճը կկազմի 10.6 տոկոս: Արդյունքում, 2026 թվականի բյուջեն, 2021-ի բյուջեի հետ համեմատած, կգերազանցի մոտ 1.6 անգամ կամ 373.2 մլրդ դրամով:

- 2025 թվականին սոցիալական պաշտպանություն ծրագրի բյուջեն կկազմի ՀՆԱ-ի 8.3 տոկոսը:
- 2026-ին նախորդող 5 տարիների ընթացքում Սոցիալական պաշտպանության ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության միջին մակարդակը կազմել է 8 տոկոս: Արդյունքում, Սոցիալական պաշտպանության ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ 2021 թվականի համեմատ 2026-ին կնվազեն 0.6 տոկոսային կետով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿՇԻՌԸ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ

- 2026 թվականին սոցիալական պաշտպանության ծախսերի կշիռը պետական բյուջեի ընդամենը ծախսերում կկազմի 27.4 տոկոս, ինչը նախորդ տարվա համեմատությամբ ցածր է 1.1 տոկոսային կետով:
- 2021-2026 թվականներին Սոցիալական պաշտպանության բյուջե/բյուջետային ծախսեր հարաբերակցության միջին մակարդակը կկազմի 28.1 տոկոս:

Սոցիալական պաշտպանության ծրագրերի բյուջեն պետական բյուջեի ընդամենը ծախսերում 2021-2025թթ., մլրդ դրամ



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- Սոցիալական պաշտպանության ծախսերի միջին տարեկան աճը զիջում է պետական բյուջեի համապատասխան ցուցանիշը: 2021-2026 թվականներին պետական բյուջեի ընդամենը ծախսերի միջին տարեկան աճը կկազմի 11.5 տոկոս՝ սոցիալական պաշտպանության բյուջեի 10.6 տոկոս մակարդակի պայմաններում:
- Արդյունքում, սոցիալական պաշտպանության ոլորտի տարեկան միջին աճի տեմպը 0.9 տոկոսային կետով զիջում է պետական բյուջեի ընդամենը ծախսերի միջին տարեկան աճին:

Սոցիալական պաշտպանության բյուջեի կշիռը պետական բյուջեի ընդամենը ծախսերում 2021-2025թթ., տոկոս



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՃԸ

- Սոցիալական պաշտպանությունը պետական ծախսերի ամենամեծ գործառական ուղղությունն է:
- Բյուջետային բոլոր մյուս բաժինները զիջում են սոցիալական պաշտպանությանը: Մասնավորապես՝ պաշտպանության ոլորտի ծախսեր/պետական ծախսեր հարաբերակցությունը կազմում է 15.6 տոկոս՝ զիջելով 11.8 տոկոսային կետով, տնտեսական հարաբերություններ ոլորտինը՝ 7.1 տոկոս՝ զիջելով 20.3 տոկոսային կետով, առողջապահությանը՝ 5.9 տոկոս՝ զիջելով 21.5 տոկոսային կետով, կրթությանը՝ 9.9 տոկոս՝ զիջելով 17.5 տոկոսային կետով և այլն:

Առանձին ոլորտների մասնաբաժինը պետական բյուջեի ընդամենը ծախսերում, 2026թ., գործառական դասակարգում, տոկոս



- Սոցիալական պաշտպանության ոլորտի ֆինանսավորման աճը համեմատաբար կայուն է: Գծապատկերում ընդգրկվել են այն ոլորտները, որոնք ունեն համեմատաբար բարձր կշիռ:
- Ստորև գծապատկերից երևում է, որ 2026 թվականին սոցիալական պաշտպանության ծախսերի աճը երրորդն է՝ ընտրված ոլորտների աճերի համեմատությամբ: Նկատենք, որ 2023-ին սոցիալական պաշտպանության ոլորտի աճը, մյուս ոլորտների համեմատ, եղել է երկրորդը:

Առանձին ոլորտների աճը 2021-2026թթ., տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Սոցիալական պաշտպանության պետական քաղաքականությունը 2026-ին կիրականացվի 17 բյուջետային ծրագրերի միջոցով:

ԴԱՍԻՉ	Սոցիալական պաշտպանության ծրագրեր	2025 մլն դրամ	2026 մլն դրամ	2026 տոկոս	2026/2025 տոկոս
1	Պարգևավճարներ և պատվովճարներ	11,107.1	10,500.2	1.1	-5.5 ▼
2	Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն	23,410.9	25,307.0	2.5	81 ▲
3	Սոցիալական փաթեթների ապահովում	11,694.1	9,600.0	1	-17.9 ▼
4	Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն	4,860.6	5,736.9	0.6	18 ▲
5	Ժողովրդագրական վիճակի բարելավում	80,087.6	83,042.8	8.4	3.7 ▲
6	Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում	24,976.8	25,987.0	2.6	4 ▲
7	Զբաղվածության ծրագիր	1,733.1	11,426.0	1.2	559.3 ▲
8	Բնակարանային ապահովում	12,006.8	15,625.4	1.6	30.1 ▲
9	Կենսաթոշակային ապահովություն	560,271.5	590,765.1	59.5	5.4 ▲

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ԴԱՍԻՉ	Սոցիալական պաշտպանության ծրագրեր	2025 մլն դրամ	2026 մլն դրամ	2026 տոկոս	2026/2025 տոկոս
10	Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ	8,232.1	8,244.2	0.8	0.1 ▲
11	Երեխաների հիմնահարցեր	4,965.3	5,864.2	0.6	18.1 ▲
12	Կանանց հիմնահարցեր, ընտանեկան բռնության և մարդկանց թրաֆիքինգի զոհերին աջակցություն	157.8	177.9	0.02	12.8 ▲
13	Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր	149.7	181.6	0.02	21.3 ▲
14	Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառում	3,300.6	4,497.5	0.5	36.3 ▲
15	Ավանդներ և այլ փոխհատուցումներ	1,010.0	1,010.0	0.1	0
16	Սոցիալական ապահովություն	122,676.5	140,051.9	14.1	14.2 ▲
17	Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն	35,000.0	55,000.0	5.5	57.1 ▲

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

- Սոցիալական պաշտպանության ոլորտի ամենամեծ բյուջետային ծրագիրը Կենսաթոշակային ապահովություն ծրագիրն է, որին կուղղվի բյուջետային հատկացումների շուրջ 60 տոկոսը:

- Հաջորդում են Սոցիալական ապահովություն, Ժողովրդագրական վիճակի բարելավում և Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն բյուջետային ծրագրերը՝ համապատասխանաբար 14.1, 8.4 և 5.5 տոկոս կշիռներով:

- Ընդհանուր առմամբ, նշված ամենամեծ չորս ծրագրերն ապահովում են սոցիալական պաշտպանության բյուջեի մոտ 88 տոկոսը:



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

1088 - ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակ
Բնակչության կայուն և ժամանակավոր զբաղվածության ապահովմանը միտված պայմանների ստեղծում

Վերջնական արդյունք
Կայուն և ժամանակավոր զբաղվածների թվաքանակի աճ

- «Զբաղվածության ծրագրի» բյուջեն 2021-2026թթ.-ին աճել է և 2021-ի համեմատ 2026-ին բյուջեն կաճի 9.6 մլրդ դրամով կամ շուրջ 6 անգամ:
- 2026թ.-ին «Զբաղվածության ծրագրին» կուղղվի 11.4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ կաճի՝ 9.7 մլրդ դրամով կամ մոտ 7 անգամ:
- Ծրագրի մասնաբաժինը 2026 թվականին կկազմի շուրջ 1.2 տոկոս, ինչը նախորդ տարվա համեմատ կավելանա 1 տոկոսային կետով: Ծրագրով 2026 թվականին կիրականացվի 5 միջոցառում, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 2-ով:

Զբաղվածության ծրագրի բյուջեն և տարեկան աճը, 2021-2026թթ., տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 12022 ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Միջոցառմամբ նախատեսվում է
ընդգրկվածների թիվը սահմանել 1000 շահառու:

- Միջոցառման անվանում - 2023 թ. Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպման և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրում
- Նպատակ - աջակցել 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց՝ ձեռք բերելու գործատուների կողմից ներկայացված պահանջներին համամապատասխան մասնագիտական հմտություններ, կարողություններ և աշխատանքային փորձ՝ թափուր աշխատատեղերը համալրելու համար:
- 2026 թվականին նախատեսվում է միջոցառմանը հատկացնել 873.2 մլն դրամ: Արդյունքում միջոցառման մասնաբաժինը «Զբաղվածության ծրագրում» կկազմի 7.6 տոկոս:

230

ուսուցման մեջ ընդգրկված անձինք

430

աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացում ընդգրկված անձինք

340

ուսուցման և աշխատանքային փորձի ձեռք բերման գործընթացում ընդգրկված անձինք

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

1098 - ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

- **Ծրագրի նպատակ**
  Հանրապետությունում մշտական բնակության վայր չունեցող անօթևան անձանց բնակարանային ապահովման աջակցություն

Վերջնական արդյունք
Հանրապետությունում մշտական բնակության վայր չունեցող անօթևան անձանց բնակարանային ապահովվածության բարելավում

- Պետական բյուջեից 2026-ին «Բնակարանային ապահովման ծրագրին» կուղղվի 15.6 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ կավելանա 3.6 մլրդ դրամով կամ 30.1 տոկոսով:
- «Բնակարանային ապահովման ծրագրի» բյուջեն 2021-2026թթ-ին ունեցել է աճման միտում: 2021-ի համեմատ 2026թ-ին բյուջեն կաճի շուրջ 19 անգամ կամ 14.8 մլրդ դրամով: 2024 թվականին գրանցվել է բյուջեի ամենամեծ աճը՝ շուրջ 3 անգամ (եռապատիկ) կամ 5.4 մլրդ դրամ 2023-ի համեմատ:
- Ծրագրի մասնաբաժինը սոցիալական պաշտպանության ծախսերում 2026 թվականին կկազմի շուրջ 1.6 տոկոս, ինչը նախորդ տարվա համեմատ կնվազի 0.3 տոկոսային կետով: Ծրագրով 2026 թվականին կիրականացվի 6 միջոցառում:

Բնակարանային ապահովման ծրագրի բյուջեն և տարեկան աճը, 2021-2026թթ., տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

1098 - ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիրը՝ ԼՂ բռնի տեղահանված ընտանիքների համար, իրականացվում է աջակցության հետևյալ եղանակներից որևէ մեկով.

01 բնակարանի (կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի) կամ անհատական բնակելի տան ձեռքբերման հավաստագրի տրամադրում

02 անհատական բնակելի տան կառուցման հավաստագրի տրամադրում

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ - 12022 ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Միջոցառման անվանում - Ղարաբաղից բռնի տեղահանվածներին օժանդակելու համար աջակցություն
Նպատակ - Ղարաբաղից բռնի տեղահանվածներին սոցիալական աջակցության տրամադրում և բնակարանային ապահովության խնդրի լուծում

- 2026 թվականին նախատեսվում է միջոցառմանը հատկացնել 7.7 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ կաճի 619 մլն դրամով կամ 8.8 տոկոսով: Արդյունքում միջոցառման մասնաբաժինը «Բնակարանային ապահովման» ծրագրում կկազմի 79.2 տոկոս, ինչը ամենամեծ մասնաբաժինն է ծրագրում՝ համեմատած մյուս միջոցառումների հետ:
- 2026թ. նախատեսվում է Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից տեղահանված 3946 ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման նպատակով՝ հիփոթեքային վարկի գծով մայր գումարի և տոկոսագումարի սուբսիդավորման համար: Սա նախորդ տարվա պլանային ցուցանիշի համեմատ պակաս է 221 ընտանիքով:

3,946

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

1225 - ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ԱՌԱՆՁԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակ՝ Օժանդակել ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքով ընտանիքների առջև ծառացած սոցիալական խնդիրների բացասական հետևանքների մեղմմանը

Վերջնական արդյունք՝ Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների առաջացրած սոցիալական խնդիրների բացասական հետևանքները մեղմելու նպատակով ընտանիքներին դրամական աջակցության տրամադրում

Ծրագիր	2025 մլրդ դրամ	2026 մլրդ դրամ	2026/2025 տոկոս
Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն	35	55	57.1

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- Ծրագրի շահառուները հիմնականում ԼՂ-ից բռնի տեղահանված անձինք են:
- Պետական բյուջեով նախատեսվում է 2026 թվականին ծրագրին տրամադրել 55 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ կավելանա 20 մլրդ դրամով կամ 57 տոկոսով:
- Ծրագրի մասնաբաժինը 2026 թվականին կկազմի շուրջ 5.5 տոկոս: 2026 թվականին ծրագրով նախատեսվում է իրականացնել 1 միջոցառում:

ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ԱՌԱՆՁԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳԻՐ - 12018 ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Միջոցառման անվանում - Ղարաբաղից բռնի տեղահանվածներին օժանդակելու համար աջակցություն

Նպատակը - Ղարաբաղից բռնի տեղահանվածներին սոցիալական աջակցության տրամադրում և բնակարանային ապահովության խնդրի լուծում

2026 թվականին նախատեսվում է միջոցառմանը հատկացնել 7.7 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ կաճի 619 մլն դրամով կամ 8.8 տոկոսով: Արդյունքում միջոցառման մասնաբաժինը «Բնակարանային ապահովման» ծրագրում կկազմի 79.2 տոկոս, ինչը ամենամեծ մասնաբաժինն է ծրագրում՝ համեմատած մյուս միջոցառումների հետ:

Սոցիալական աջակցություն ստացող անձանց թիվը 2026-ին նախատեսվում է սահմանել 71,331 շահառու:

53,880	սոցիալական աջակցություն ստացող շահառուներ
9,496	բնակարանային ախահովման համար շահառուներ
7,874	Ղարաբաղից բռնի տեղահանված սոցիալապես անապահով ընտանիքներին հրատապ սոցիալական աջակցություն
81	Ղարաբաղից բռնի տեղահանված առանձին ընտանիքներին բնակարանային ապահովման պետական աջակցություն
12	ամիսների քանակ

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

«ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության
զարգացման հասարակական կազմակերպություն

info@ngoc.am
ngoc.am